



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ա. ՏԵՂՈՎ

# ՊԱՏՄՈՒԱԾԻՆԵՐ

4025

F. M. P. q., U. - vL.

44129

1903

176

891.71

9-34

**S U B J E C T**

Ա. ԶԵԽՈՎ

ՄԻՔԱՆԻ

# ՊԱՏՄՈՒՄԾՔՆԵՐ

1. Շատոսիս
2. Քայտաստաճի Աս-  
խորդ գիշերը
3. Լառ վերջաւորու-  
թիւն
4. Հմ, հասարակութիւն
5. Խոպատուն.

**2003**

Թարգ. Ա. Վ.

---

**2010**  
 ԹԻՖԼԻՍ

 ՏՊԱՐԱՆ Մ. ՎԱՐԴԱԿԱՆԵԱՆՑԻ  
 Գաղափական Յ.

|| ՏԻՊՈԳՐԱՓԻԱ Մ. ՎԱՐԴԱԿԱՆЦԱ.

1903

# ՃԱՌԱԽՈՍՅ

Մի գեղեցիկ առաւտ թաղում էին Կիրելլ ի-  
վանովիչ Վավիլոնովին, որի մահը առաջ էր եկել  
մեզանում մեծ ծաւալ ստացած երկու հիւանդու-  
թիւնից, այն է՝ չար կնոջից և ալկօդօլիզմից։ Երբ  
լուղարկաւորութեան հանդէսը եկեղեցուց գէպի հան-  
գստարան շարժուեց, հանգուցեալի պաշտօնակից-  
ներից մէկը՝ Պապլավսկին, կառք նստեց և ոլա-  
ցաւ իւր բարեկամ Գրիգորի Պետրովիչ Զապոլկինի  
մօտ, որը ջահիլ, բայց բաւականին հռչակ ստացած  
մի անձնաւորութիւն էր։ Զապոլկինը, ինչպէս ըն-  
թերցողներից շատերին լալտնի է, ունի յանպատ-  
րաստից հարսանեաց, հոբէլեանների և դամբանա-  
կան ճառեր արտասանելու զարմանալի ընդունա-  
կութիւն։ Նա կարող է ճառել երբ կամենաք, — քու-  
նը զլսին, քաղցած փորով, հարբած ժամանակ,  
տաքութեան մէջ։ Նորա ճառը միշտ սահում է  
հարթ և առատութեամբ, ինչպէս ջրի հոսանքը խո-  
ղովակի միջից։ Ողորմելի խօսքեր նորա ճարտասա-  
նական բառարանի մէջ աւելի շատ կարելի է գտնել,

Дозволено Цензурою. 18 Апреля 1903 г. Тифлисъ.

59937-ահ



2857-72 յ

քան որ և է տրաքախիրում բղոճներ:

Նա միշտ ճառում է պերճ և ընդարձակ, այնպէս  
որ երբեմն, մանաւանդ վաճառականների պսակա-  
դրութեանց հանդէսներում, նորան լռեցնելու հա-  
մար, ստիպուած էին լինում ոստիկանութեան օգ-  
նութեանը դիմել:

—Ես, եղբայր, քեզ մօտ մի գործով եմ եկել,  
—սկսեց Պապլավսկին, նորան տանը գտնելով — ալս  
րոպէիս հագնուէր գնանք: Մերոնցից մէկը մեռել  
է, նորան հանդերձեալ աշխարհ ենք ուղարկում.  
Հարկաւոր է, եղբայր, հրաժեշտի մի երկու խօսք  
գուրս տալ . . . բոլորիս լոլսը քեզ վերալ է: Եթէ  
մեռնողը աննշան ծառալողներից մէկը լինէր, քեզ  
չէինք էլ անհանգստացնի. սա ախր ատենադպիրն է,  
այսպէս ասած՝ կանցելիարիալի լենարանը. անլար-  
մար է այսպիսի մի շեշկալի առանց ծառասացու-  
թեան թաղել:

—Ամ, ատենադպիրը — ասաց Զապոլկինը յօ-  
րանջելով — էն արեցցողը:

—Այո՛, նա: Բլինի կըլինի, նախաճաշ . . կառ-  
քի վճար կը ստանաս: Գնանք, հոգիս, էնտեղ մի  
դատարկաբանութիւն քշիր, որից որքան կարելի է  
աւելի ցիցերոնահոտ փչի: դորա համար քեզանից  
շատ շնորհակալ կը լինենք:

Զապոլկինը ուրախութեամբ համաձայնուեց:  
Նա մի քիչ գզզեց մազերը, երեսին մելամաղձոտ  
արտայայտութիւն տուաւ, և Պապլաւսկու հետ փո-  
ղոց դուրս եկաւ:

— Ճանաչում եմ էդ ձեր ատենադպիրին — ասաց  
նա կառք նստելիս — Աստուած հոգին լուսաւորի,  
լաւ սրիկալ էր սատանի ձագը:

— Դէ, Գրիշա, մեռածին հայհոյելը լաւ բան  
չէ:

— Սօենք դա ճիշդ է առ մօրուս ոնիլ ե-  
ռու, բայց և այնպէս լաւ սրիկալ էր անիծուածը:

Նոքա հասան յուղարկաւորութեան հանդիսին  
և միացան նորա հետ:

Հանգուցեալին շատ դանդաղ էին ատանում,  
այնպէս որ մինչև հանգստարան հասնելը սոքա  
մի երկու, երեք անգամ ժամանակ դատան տրաքախիր  
մանելու և մի երկու՝ հանգուցեալի հոգու վրկու-  
թեան համար գցելու:

Հանգստարանում հրաֆեշտի կարգը կատարուե-  
ցաւ: Զոքանչը, կինը և քենին, ըստ օրինաց, շատ  
էին լաց լինում: Մինչև անգամ, դագաղը իջեցնելու  
ժամանակ, կինը աղաղակեց. «Թողէք, թողէք ինձ  
նրա հետ գնամ.» բայց իւր ալդ դիտաւորութիւնը ի  
կատար չ'ածեց, երեկի ստանալիք կենսաթօշակի մա-  
սին մտածելով: Զապոլկինը սպասեց, մինչև ամեն  
ինչ հանդարտուեց, ապա առաջ եկաւ, մի հայեացք  
ձգեց բոլոր հանդիսականների վերալ և սկսեց.

— Հաւատանք մեր ականջներին և աչքերին:  
Արդեօք ալս դագաղը, այս լացակրկնած դէմքերը,  
հառաջանքները և գոչիւնները սարսափելի երազ  
չէ . . . Բայց աւաղ, սա երազ չէ, և մեր աչքերը  
մեզ չեն խաբում: Նա, որին մենք մի քանի օր սո-

ըանից առաջ տեսել ենք այնչափ առողիկ և երիտասարդի նման զուարժադէմ և անարատ, որը մի քանի օր առաջ, անխոնջ մեղուի նման, քարշ էր տալիս իւր աշխատանքի մեղրը պետական կազմակերպութեան ընդհանուր փեթակը, նա, որը . . . նա այժմ դարձել է փոշի, դարձել է նիւթական միրաժ: Անողորմ մահը իւր լամառ ճանկերը մեկնեց գէպի նա այն ժամանակ, երբ նա, չընալած հասակաւոր լինելուն, լի էր թարմ ոլժերով և վառվուն լոյսերով: Կորուստը անփոխարինելի է: Ասացէք, ով կը փոխարինի մեզ համար նորան: Լաւ պաշտօնեաներ մենք շատ ունինք: բայց Պրօկօֆիլ Օսիպիչը մի եզակի անձնաւորութիւն էր: Նա բոլոր հոգով անձնատուր էր իւր ազնիւ պարտականութեանցը, չէր խնալում իւր ոլժերը, գիշերները անքուն էր անցնում, անշահասէր և անկաշառ անձրն էր . . . Ինչպէս արհամարհում էր նա նոցա, որոնք ի. վնաս ընդհանուրի բարօրութեան, աշխատում էին նորան կաշառել, որը կեանքի բարիքների լոյսով աշխատում էր նորան գալթակղեցնել և իւր պարտականութեանցը դաւաճանել տալ: Այս, մեր աշքի առաջ Պրօկօֆիլ Օսիպիչը իւր չնչին ուժիկը բաժանում էր աւելի աղքատ ընկերներին: ահա դուք այս ըովէիս լսեցիք նորա հաշուով ապրող որբերի ողբ ու կոծը: Իւր պարտականութիւններին և բարի գործերին հաւատարիմ, նա կեանքի բարիքների և հեշտութիւնների հետ ծանօթ չէր և մինչև անգամ ամուսնական կեանքի բաղ-

գաւորութիւնից զուրկ էր մնացել: Ձեզ բոլորիդ լայտնի է, որ նա մինչև իւր վերջին օրերը մնաց ամուրի: Ասացէք, ով կը փոխարինի մեզ նրան, իբրև լնկերի: Կարծես այս ըովէիս իմ աշքի առաջ լինի նորա սափրած, գորովալից գէմքը, որը մեզ վերալ նալում էր բարի ժպիտով: Կարծես այս ըովէիս լսում եմ նորա մեղմ և քնքոլշ բարեկամական ձայնը: Հանգիստ սսկերացդ, Պրօկօֆիլ Օսիպիչ, ննջիր, ազնիւ, մեծահոգի աշխատաւոր:

Զապուկինը շարունակում էր ճառել, իսկ ունկընդիրները սկսեցին միմեանց մէջ փսփսալ: ճառը բոլորն էլ հաւանեցին, մինչև անգամ ոմանք մի քանի կաթիլ արտասուք գլորեցին: բայց մի բան տարօրինակ էր թւում բոլորին: Նախ՝ անհասկանալի էր, թէ ինչու ճառախօսը հանգուցեալին Պրօկօֆիլ Օսիպիչ է անուանում, քանի որ նա լալտնի էր բոլորին իբրև Կիրիլլ իվանովիչ: Երկրորդ՝ բոլորին լալտնի էր, որ Հանգուցեալը իւր ամբողջ կեանքում կռիւ էր մղում իւր օրինական կնոջ գէմ, հետեւապէս ամուրի չէր: Երրորդ՝ նա ունէր խիտ, շէկ մօրուք և երբէք չէր սափրուել: Ունկընդիրները տարակուսանքի մէջ էին, միմեանց երեսին էին նայում և ուսերը վեր բարձրացնում:

— Պրօկօֆիլ Օսիպիչ, շարունակում է ճառախօսը զգացուած գերեզմանին նայելով — քո գէմքը տգեղ էր, մինչև անգամ ալլանգակ: դու մոայլ և գաժան էիր, բայց բոլորին էլ լալտնի էր, որ այդ ակներև տրտաքինի տակ բաբախում է ազնիւ և բա-

## Եեկամական մի սիրտ:

Նուտով հանդիսականները սկսեցին նկատել և  
ճառախօսի դէմքի վերայ մի տարօրինակ փոփոխու-  
թիւն։ Նա իւր հայեցքը լառեց մի կէտի վերայ,  
սկսեց անհանգիստ շարժումներ գործել և ուսերը  
նմանապէս զեր բարձրացնել։ Յանկարծ նա լռեց,  
զարմանքով բերանը բացեց, և դառնալով դէպի Պա-  
պյավսկին, ասաց սարսափած ձայնով.

— Լսիր, նա կենդանի է:

—Ո՞վ է կենդանի:

— Պրօկօֆիլ Օսիպիչը. ահա նա արձանի մօռ  
կանգնած է:

— Նա չէ ել մեռել։ Մեռնողը կիբելլ իվանովիչն է։

— ԶԵ որ դու ինքդ ասացիը, որ ձեր ատենագպիրն է մեռնողը:

—Մեր ատենադպիրը Կերելլ Խվանովիչն է, խելօք. դու շփոթել ես. Ճիշտ է, Պրօկօֆի Օսիափիչը մեր ատենադպերն էր, բայց երկու տարի սորանից առաջ նորան, սեղանապետի պաշտօնով երկրորդ բաժինը տեղափոխեցին:

— Այսր ձեզ սատանան էլ չի հասկանալ:

— Դէ, ինչես կանգնել, ալ տղալ, շարունակվէր,  
ամօթ է:

Զամուկինը դարձաւ դէպի գերեզմանը, և նախկին ճարտասանութեամբ շարունակեց ընդհատուած ճառը։ Արձանի մօտ իսկապես կանգնած էր Պրօկօֆիի Օսկիպիչը, մի սափրած դէմքով ծեր պաշտօնեալ։

— Ո՞ր ստանան բգեց քեզ կենդանի մարդուն  
գերեզման իջեցնել, ասում էին պաշտօնեանեթ Զա-  
պոյկինին, թալումից վերադառնալու ժամանակ:

— Լաւ չէ, պարո՞ն, — փնթփնթում էր Պրօկօ-  
ֆիլ Օսիպիչը — ձեր ճառը կարելի է լաւ է, միայն  
մեռած մարդու վերաբերմամբ. իսկ կենդանիի վե-  
րաբերմամբ այդ կարելի է միայն ծաղրի տեղ ընդու-  
նել. ին ինչեր էիք ասում, «անշահասէր է, կա-  
շառք չի վերցնում», կենդանի մարդու մասին այդ  
կարելի է միայն իբրև ծաղր գործ ածել, Բացի դո-  
րանից, մեծապատիւ պարո՞ն, ոչ ոք ձեզ չէր խընդ-  
րում իմ արտաքինի մասին ճառել: Տգեղ եմ, այ-  
լանդակ եմ, ինչ որ եմ. Բնչ կարիք կայ ամբոխի  
առաջ իմ դեմքի նկարագրութիւնը երկան բերել.  
Դա վիրաւորական է:

## ԹԱՏՈՒԵԼՈՒՄ ՆԱԽՈԲԻ ԳԻՇԵՐԸ

Աղա, վատ նշան է—ասաց կառապանը՝ դեպի ինձ դառնալով և մտրակով մեր ճանապարհի առաջից թռչկռտալով անցնող նապաստակի վերայ ցոյց տալով։

Ես առանց նապաստակի նախագուշակութեան էլ գիտէի, որ իմ ապագան սարսափելի է լինելու։ Ես գնում էի Ս—ի նահանգական դատարանը, «բատեղ պիտի դատուէի երկնութեանս պատճառաւ։ Եղանակը սարսափելի էր, Երբ ես, մօտ կէս գիշերին, հասայ փոստային կալարանը, նմանում էի այնպիսի մարդու, որին ձիւնով լաւ սուաղել, ջրով թըրո ջել և լաւ քոթակել են. այնքան թըրջուած, մըրսած և թմրած էի, տխուր ճանապարհորդական միօրինակ ցնցումներից։ Կալարանում ինձ դիմաւորեց կալարանապետը՝ մի բարձրահաստակ, ճաղատ մարդ, կապոյտ զոլերով վարժիքը հագին, քնաթաթախ դէմքով։ Նորա բեխերը կարծես քթածակերից էին բուսել, և նորա հոտառութեանը արգելում էին. Իսկ հոտառութեան նիւթ, պէտք է ասած,

որ իսկապէս շատ կար։ Երբ վերտեսուչը փընթ- փընթալով, հեւալով և ծոծրակը քորելով բացեց դէպի կալարանի ննջարանը տանող գուռը և լուռ, արմուկով ցոյց տուեց ինձ իմ հանգիստ առնելու տեղը, իմ հոտառութիւնը պաշարուեց միանգամից թթուաշի, սուրդուչի և ճիւլած մլուկի ծանր հո- տերով և փոքր մնաց, որ այդ հոտում խեզդուէի։

Լապտերը, որը դրուած էր սեղանի վերալ և լուսաւորում էր փալտեալ չ'ներկուած պատերը, ծը- խում էր, ինչպէս վառուղ փայտ։

—Համա հոտեր են բուրում այստեղից հա, սի- նիօր, ասացի ես, սենհակ մտնելով և չեմօդանս սեղանի վերալ դնելով։ Վերատեսուչը հոտհոտեց օդը, և երկմտութեամբ գլուխը շարժեց։

—Սովորական հոտերիցն է,—ասաց նա շլինքը քորելով—ցրտից էք եկած, այդ պատճառաւ ձեզ այդպէս է թւում։ Յանչիկ ու լոշաճախ ձրիխ- նուտъ, ա գոսподա ու պախնուտъ.

Վերատեսչին դուրս քշեցի և սկսեցի դիտել իմ ժա- մանակաւոր կացարանս։ Բազմոցը, որի վերալ ես պիտի քնէի, բաւականին լոյն էր, ինչպէս ջխտուի մահճակալ, ծածկուած էր կիխոնկալով և սառուցի նման սառն էր։ Բացի բազմոցից, սենեակում կար մեծ, չուգունի վառարան, սեղան, վերոյիշեալ լապ- տերով, մի զոլք բրդեալ հողաթափներ, մի պայու- ռակ և շիրմու, որը վարագուրում էր սենեակի ան- կիւնը։ Եիրմալի լետեր մէկը հանգիստ քնած էր։

Դիտողութիւնս վերջացնելուց լետոյ, անկողինս

բացի բազմոցի վերալ և սկսեցի հանուել: Իմ հոտառութիւնս գարշահոտին շատ շուտ ընտելացաւ: Հանելով սիւրտուկս, վարտիքս և կօշիկներս, շարունակ ժպտալով, կծկուելով և կոտրտուելով ես մի քանի անգամ վարարանի չորս կողմը վեր վեր թռալ, ոտերս օդի մէջ կարելոյն չափ վերը բարձրցնելով . . . Այդ թռիչքները ինձ փոքր ինչ տաքացրեց: Դորանից լեռով ինձ մնում էր ձգուել բազմոցի վերալ և քնել, բայց ալտեղ մի կազուտ տեղի ունեցաւ: Իմ հալեացքս ակամալից ընկաւ շիրմալի վերալ և . . . երեակալեցէք իմ սարսափս: Շիրմալի լեռեից ինձ վերալ նայում էր մի կանացի գլուխ, անկանոն թափթփուած մազերով, սեռոկ աշերով և ժպտող դէմքով: Ես շփոթուեցի: Գլուխը՝ տեսնելով որ ես նորան նկատեցի, նմանապէս շփոթուեց և անհետացաւ: Ինչպէս մեղապարտ, գըլուխս քարշ արած, հանդարտ մօտեցալ բազմոցին, պառկեցի և մուշտակով ծածկուեցալ:

«Ի՞նչ խայտառակութիւն—մտածեցի ես—կը նշանակէ նա իմ թռչուտալս տեսել է, լաւ չէ . . . Եւ սիրունիկ դէմքի դիմագծերը լիշելով, ես ակամալ սկսեցի երազել: Մէկը միւսից աւելի գեղեցիկ և գայթակեցուցիչ մտապատկերներ կուտակուեցին իմ երեակալութեան մէջ, և, կարծես ի պատիժ իմ մեղսական մտքերի, յանկարծ աջ ալտիս վերալ զգացի խիստ ցաւ ձեռքս տարալ դէպի դէմքըս, ոչինչ չըռուեցի, բայց հասկացալ թէ բանն ինչումն է: Զարդուած մլուկի հոտ եկաւ:

— Սատանան գիտէ թէ սա ինչ բան է—լսեցի ես միկնոյն ժամանակ կանացի ձայն, — անիծեալ մլուկները, երեխ, ինձ ուտել են ուզում: Ըհէ! . . . Ես միշեցի իմ լաւ սովորութիւնը՝ այն է միշտ, ճանապարհորդութեան ժամանակ, յետս առնել պարսկական փոշի մլուկների գէմ: Այս անգամ ես ես, իմ այդ սովորութեանս չէի դաւաճանել: Իսկոյն և եթ փոշիով լի արկղը պայուսակիս միջից հանեցի: Մնում էր ալժմ ալդ «էնցիկլօպեդիալի» գէմ գտնուած միջոցը սիրունիկ կողջը առաջարկել և ծանօթութիւնը գլուխ եկած կը լինէր: Բայց բնչպէս առաջարկել:

— Անտանելի է այս:

— Տիրուհի, ասացի ես, կարելոյն չափ քնքոյշ ձայնով.—որքան կարողացայ հասկանալ ձեր վերջին բացականչութիւնից, ձեզ մլուկները անհանգըստացնում են: Ես դոցա դէմ պարսկական փոշի ունիմ: Եթէ կը կամենաք, ես . . .

— 0', խնդրեմ, խնդրեմ:

— Ուրեմն ալս ըոպէիս . . . — ուրախացայ ես— միայն մուշտակս հագնեմ, իսկոյն կ'ըերեմ:

— Ո՛չ, ոչ, դուք շիրմալի վերալից տուէք. իսկ այստես մի գաք:

— Ես ինքս հասկանում եմ, որ շիրմալի վերալից պիտի տամ, մի վախենաք, բաշիբուզուկ խօշեմ:

— ծանապարհորդ մարդ էք, Աստուած գիտէ թէ ով էք:

— Հըմ, . . թէկուզ շիրմալի յետեն էլ զամ ինչ կըլինի որ . . . մանաւանդ որ ես բժիշկ եմ — փչեցի ես — իսկ բժիշկները, չաստնի պըրիստաւները և վարսաւէրները իրաւունք ունին մարդկանց անձնական կեանքում միջամտել:

— Իսկապէս դուք բժիշկնեք, ուրեմն կարող էք: Բայց ինչո՞ւ էք դուք անհանգստանույ. ես ամուսնուս ձեզ մօտ կ'ուղարկեմ: Ֆէդիս, Ֆէդիս — կանչեց նա ցածրացնելով ձայնը — Ֆէդիս, ալ դըմքօ, արթնացիր է՛: Վեր կաց զնա՞, պ. բժիշկը այնքան բարի է, որ մեզ՝ մլուկների դէմ պարսկական փոշի է առաջարկում:

Եիրմալի յետեռում «Ֆեդիսին ներկայութիւնը ինձ համար մի անսպասելի նորութիւն էր: Կարծես գլխիս աքացի զարկեցին . . . հոգիս լցուեց ալնպիսի զգացումով, որպիսին երևի զգում է հրացանի ոտը, երբ հրացանը փստում է — ամօթ, զարոյթ և ափսոստնք: Սիրտս ալնպէս վատ դարձաւ, և ալնպէս գարշելի թուաց ինձ ալդ ֆէդիան, երբ դուրս եկաւ շիրմայի յետենից, որ փոքր էր մնացել կարառել կանչէի:

Նա մի բարձրահասսակ, ջղապինդ մարդ էր, մօտ լիսուն տարեկան, սպիտակ բակերով, աստիճանաւորի հուպ եկած շրմունքներով և կասպագոյն երակներով, որոնք, անկանոն կերպով, շաղէին եկած նորա քթի և քունքի մօտ. նա հագած էր խալաթ և հողաթափներ:

— Դուք շատ բարի էք, պ. բժիշկ. — ասաց նա,

վերցնելով պարսկական փոշին, և, դէպի շիրման դառնալով — merci. սլուրգան ձեզ էլ վրալ հասաւ:

— Ալո՛, — մոնչացի ես, բազմոցի վերայ պառկելով, և մուշտակս կատաղած վերաս քաշելով:

— Ալդպէս . . . Զինուկա, քո քթիկի վերալից մլուկ է վազում, թոյլ տուր վերցնեմ:

— Կարող ես. պատասխանեց Զինոչկան ծիծագելով: — Չ'ըռնեցիր, չ'ըռնեցիր. ստատուկի սօվետնիկ ես, բոլորը քեզանից վախենում են, իսկ մի մլուկի հետ գլուխ դուրս տանել չես կարողանում:

— Զինոչկա, օտար մարդու ներկայութեամբ . . .

. . (Հոդոց), միշտ դու ալդպէս ես, Աստուած վկար:

— Խոզեր, չեն թողնում քնել. — Փնթինթացի ես բարկանալով, ինքո անգամ չ'իմանալով թէ ինչ պատճառով:

Բայց շուտով ամուսինները լաեցին: Ես աչքերս վակեցի և վճռեցի ոչ մի բանի մասին չ'մտածել. որ շուտ քնեմ: Բայց անցաւ կէս, մի ժամ և ես դեռ քնած չէի: Վերջ ի վերջոյ իմ դրացիներս էլ սկսեցին շուռ ու մուռ դալ և մըթմըթալ:

— Զարմանալի է, պարսկական փոշին անգամ ոչ մի օգուտ չի բերում — ասում էր ֆէդիան — այնքան շատ են այս անիծեալ մլուկները: Պ բժիշկ, Զինոչկան խնդրում է, որ ես ձեզանից հարցնեմ, թէ ինչո՞ւ մլուկները ալսպիսի անտանելի հոտ ունին:

Խօսակցութիւնը բացուեց: Խօսում էինք մըլուկների, եղանակի, Ուռսաստանի ձմեռների մասին, ներկայ բժշկութեան մասին, որը աստղաբաշխու-

թեան չափ անմիտ մի գիտութիւն է, խօսեցինք ձեզ իմասնի մասին . . .

— Դու, Զինոչկա, մի քաշուիր, չէ որ նա բժիշկ է — լսեցի ես, կղիսօնի մասին եղած խօսակցութիւնից յետով, Ֆէդիալի ձայնը. — մի քաշուիր, հարցրու, վախենալու բան չկայ, Շերվեցովը չ'օգնեց, գուցէ սա օգնի:

— Ինքդ հարցրու, — պատասխանեց Զինոչկան, Փափսալով:

— Պ. բժիշկ, — դարձաւ Ֆեդիան գեպի ինձ էս ինչցն է, որ կիսս կրծքում մի ինչ որ ճնշումն է զգում երբեմն այնպէս . . . Հազոց, ճնշումն, կարծես թէ գիտէք այնտեղ, մի ինչ որ բան արում է.

— Դա երկար պատմութիւն է. միանգամից բացատրել անկարելի է — փորձեցի ես զլուխս ազատել:

— Ի՞նչ անհնք, որ երկար է. ժամանակ շատ կտլ, միևնուն է չենք կարողանում քնել . . Քննեցէք սորան, սիրելիս: Պէտք է ասած, որ սորան Շերվեցովն էր բժշկում. իբրև մարդ նա շատ ազնիւ է, բայց . . . ով է իմանում՝ ես նորան հաւատ չեմ ընծալում. չեմ հաւատում նորան: Տեսնում եմ, որ ալդ ձեզ դուրեկան չէ, բայց բարի եղէք, մի մերժէք: Դուք սորան քննեցէք, իսկ ես կ'զնամ կալարանապետի մօտ ինքնաեռի պատուէր կ'տամ:

Նա, հողաթափները թփթփացնելով, դուրս գընաց:

Ես շիրմալի յետել գնացի:

Զինոչկան նստած էր լալն բազմոցի վերալ բազ-

մաթիւ բարձերով շըջապատուած, իսկ ձեռքով իւր ասեղնագործ օձիքն էր պահում:

— Հանեցէք ձեր լեզուն, — սկսեցի ես նրա մօտ նստելով, և յօնքերս կիտելով:

Նա լեզուն դուրս հանեց և ծիծաղեց, Լեզուն բնական կարմէր զոյն ունէր: Ես սկսեցի երակը շօշափել:

— Հ'մծ, մոնչացի ես երակը որոնելով և շըգտնելով:

Զեմ լիշում թէ դարձեալ Բնէ Հարցեր առաջարկեցի ես, նրա ծիծաղկոտ դէմքին նալելով, միայն լիշում եմ որ իմ գիտնօսափալիս վերջը ես այնպէս լիմար և անմիտ էի թւում ինձ, որ էլ հարցու փորձի զլուխս չունէի:

Վերջապէս նստած Փէդիալի և Զինոչկալի հետ սեղանի մօտ թէյ էինք խմում. հարկաւոր էր գեղատօմս գրել և ես բժշկական բոլոր կանոնների հիման վերալ յօրինեցի:

Rp: Sic transit o,o<sup>5</sup>

Gloria mundi 1,0

Aquae destillatae 0,1

Երկու ժամը մէկ անգամ մեծ դրդալով:

Տիկին Աէլովալին բժիշկ Զալցեվ:

Ուռաւոտեան, երբ ես արդէն ճանապարհ ընկնելու բոլորովին պատրաստ, չամօդանը ձեռքին, իմ նոր ծանօթներիս յաւիտեան հրաժեշտ էի տալիս, Ֆէդիան կանգնեց առաջս և բաճկոնիս կոճակից բըռնած երկար համոզում էր վերցնել տասուուբլիանոցը:

—Ոչ, դուք պարտաւոր էք վերցնել: Ես սովու եմ վճարել ամեն ազնիւ աշխատանքի համար: Դուք ուսել էք, չարչարուել էք: Չեր գիտութիւնը ձեզ արիւն քրտինք է նստել: Ես այդ շատ լաւ եմ հասկանում: Ել ճար չկար, ստիպուած եղայ վերցնել:

Այսպէս մօտաւորապէս անցըի ես իմ դատուելուս նախորդ գիշերը:

Չեմ նկարագրի ել այն զգացումները, որոնք ինձ պաշարեցին, երբ իմ առաջ բացուեցաւ դուռը և սուդերնի պրիուտաւը ինձ մատնացոլց արաւ դատապարտեալների նստարանը: Կասեմ միայն, որ ես գունատուեցի և շփոթուեցի, երբ յետ նայելով տեսալ իմ վերալ սկեռած հարիւրաւոր աշքեր: Իսկ երբ աչքիս ընկան երդուեալների լուրջ, հանդիսաւոր դէմքերը, այն ժամանակ ես ինձ համար հոգոց կարգացի: Բայց ես չեմ կարող ձեզ նկարագրել և դուք ել չէք կարող ձեզ պատկերացնել իմ սարսափը, երբ ես, աչքերս վեր բարձրացնելով տեսալ դատախազի տեղում նստած՝ ի՞նչ էք կարծում ում—Ֆէդիալին: Նա նստած ինչ որ գրում էր. նորան նայելով ես լիշեցի մլուկներին, Զինոչկալին, իմ դեազնոստիկան և ոչ թէ սարսուռ, այլ ամբողջ Սառուցեալ Ովկիանոս անցաւ իմ մէջքովս...: Գրելը վերջացնելով, նա աչքը ինձ վերալ բարձրացրեց: Մկզբում նա ինձ չ'ձանաշեց, բայց յետոյ նորա աչքերը չուռեցան, ներքին ծնօտը ցած ընկաւ, ձեռքը գողաց: Ես ել

անզգայաբար բարձրացայ տեղիցս, և աչքերս նրա վերալ լաւեցի. :

—Դատապարտեալ, յայտնեցէք դատաստանին ձեր անունը և այլն և այլն, սկսեց նախագահը:

Դատախազը նստեց և մի բաժակ ջուր խմեց: Սառը քրտինքը պատեց նորա ճակատը:

—Եհէ՛, սրանք ինձ լաւ բաղանիք անել կըտան, մտածեցի ես:

Ինչպէս երեւում էր դատախազը վճռել էր ինձ լաւ դաղել: Նա յաճախ լուզում էր, քրքրում էր վկաների ցուցմունքները, բարկանում, քրթմըն-ըում էր...

Վերջացնելու ժամանակ է: Դրում եմ այս ճաշի ընդմիջման ժամանակ. այս բոպէիս դատախազն է ճառելու—ի՞նչ կըլինի արդեօք, ...



կարողութիւնս մեծ չէ, բայց կարող եմ կերակրել սիրոյ առարկայիս և ապագայ որդոցու Կասեմ ձեզ, միայն խօսքը մեր մէջ, որ ես բացի ստանալիք ուոճիկիցս ունիմ և բանկում մի գումար, որը ես ժողովեցի շնորհիւ իմ համեստ վարած կեանքիս: Ես զրական մարդ եմ, խմողներից չեմ, կանոնակոր կեանք եմ վարում, այնպէս որ ես շատերի համար իրեւ օրինակ կարող եմ ծառայել: Բայց մի բան է միայն ինձ պակասում, այն է՝ ընտանեկան օջախ և կեանքի ընկերուհի. վարում եմ մի ինչ որ թափառական ունգարացու կեանք՝ մի տեղից միւսը շրջելով, առանց որևէ բաւականութեան: Զկալ մէկը, որի հետ ես կարողանամ խորհրդակցել, չկալ մէկը, որը հիւանդ ժամանակս մի բաժակ ջուր անգամ տար ինձ և ալլն և ալլն: Բայց գորանից, Լիւբով Գրիգորենա, ամուսնացած մարդը հասարակութեան մէջ աւելի լարգ ունի, քան ամուրին...: Ես կրթուած գոսակարգին պատկանող մարդ եմ, փող ունեմ, իսկ երբ խօսքը գայ այն հարցին, թէ ես ինչ եմ ներկայացնում ինձանով, կարծես անտուն անտէր լինիմ, բութուի նման միայնակ եմ: Այդ պատճառու ես շատ կըցանկանալի «իգումենէի» կապերով կապուել, տլսինքն օրինաւոր ամուսնութեամբ կապուել մի որևէ արժանաւոր արարածի հետ:

— Լաւ կըլինի, հոգոց հանեց հարսնախօսը:

— Ես մենակ եմ և այս քաղաքում բոլորովին անլայտ մարդ եմ: Ո՞ւր գնամ, ում գիմեմ, քանի

## Լ Ա Խ Վ Ե Բ Հ Ա Խ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օքեր կօնդուկտոր Ստիչինի մօտ, նորա օրապահութիւնից ս զատ օրերից մէկում, նստած էր Լիւբով Գրիգորենան, մի մօտ քառասուն տառ ըիկան ծանրաբարու և բշտկապատ գէմքով կին, որը պարապում էր հարսնախօսութեամբ և ուրիշ շատ արհեստներով, որոնց մասին լնդունուած է միայն ցածր ալնով խօսել:

Ստիչինը փոքր ինչ շփոթուած էր, բայց ըստ սովորականին խիստ և լուրջ գէմքով, սիգարան բերանին անց ու գարձ էր անում սենեակում և խօսում էր.

— Նատ ուրախ եմ ձեզ հետ ծահօթանալու: Սիմէօն Իվանիչը ձեզ ներկայացրեց այն տեսակետից, որ զուք կարող էք ինձ օգնել մի շշեկոտիւի և շատ լուրջ գործում, որից կախուած է իմ բաղդաւորութիւնը: Ես, Լիւբով Գրիգորենա, 52 տարեկան եմ, ալսինքն մի այնպիսի հասակում եմ, երբ շատերը արդէն հասունացած որդիք ունին: Իմ պաշտօնս հիմնաւոր ոլաշաօններից է: Թէւ

որ բոլորը այստեղ ինձ անծանօթ են։ Ահա թէ  
ինչու Սիմեոն Իվանիչը ինձ խորհուրդ տուեց գի-  
մել մի այնպիսի անձնաւորութեան օգնութեանը,  
որը այդ գործին հմուտ է և որի արհեստն է՝  
մարդկանց երջանկացնելը։ Ուստի ես խոնարհաբար  
խնդրում եմ ձեզ, Լիւբով Գրիգորևնա, ձեր միջամ-  
տութիւնը իմ բաղդաւորութիւնս հիմնելու համար  
չ'ինակէք։ Դուք քաղաքիս բոլոր հարսնացուներին  
ճանաչում եք և ձեզ համար հեշտ կը ինձ օգ-  
նելու։

—Եղ կարելի է...

—Անուշ արէք, խոնարհաբար խնդրում եմ:  
Սովոր շարժումով հարսնախօսը մօտեցրեց ո-  
ղիով բաժակը շըթունքներին և առանց խոժո-  
ռուելու անգամ կուլ տուեց:

—Եղ կարելի է, կը կնեց նա, բայց Բնչ տեսակ հարսնացու էք կամենում դուք, Նիկոլայ Նիկոլայեվիչ:

—Ե՞ս, ինչպիսին բաղդր կը բերի:

— ձիշտ է, որ դա բաղդից է կախուած, բայց  
չէ՞ որ իւրաքանչյուրը իւր ճաշակն ունի. մէկը սի-  
լում է սկզբներին, միւսը ընդհակառակը:

— Գիտեք ինչ է, Լիւրով Գրիգորենա, ասաց  
Ստիչկինը ծանր ու բարակ հոգոց քաշելով: — Ես  
դրական և բնաւորութեան տէր մարդ եմ, ինձ  
համար գեղեցկութիւնը և առհասարակ արտաքինը  
երկրորդական գեր են խաղում, որովհետեւ ձեզ էլ  
լայտնի է, որ Ը лица воды не пить: Գեղեցիկ

կինը շատ դափ-դառաքար էլ ունի: Ես այն համոզման եմ, որ գլխաւորը կնոջ արտաքինը չէ, այլ այն, ինչ որ նորա ներսումն է գտնվում, այսինքն՝ որ նա լաւ սիրտ և լաւ հոգի ունենալ: Անոնց արեք, խնդրում եմ...: Ասենք ի հարկէ շատ ցանկալի կըլինէր, եթէ կինս այնպէս... հաստիկ լինէր, բայց դա փոխադարձ ֆօրտունալի համար նշանակութիւն չունի: Գլխաւորը՝ որ խելօք լինի: Խսկապէս կնոջ համար խելքն էլ աւելորդ է, որովհետև շատ խելք ունեցող կինը իր մասին արդէն մեծ կարծիքներ և զանազան իդէալներ կունենալ: Էս ժամանակներիս ի հարկէ առանց կրթութեսն անկարելի է, բայց կրթութիւնն էլ զանազան է լինում: Օրինակ, շատ դուրեկան բան կըլինէր, եթէ կինս ֆրանսերէն, գերմաներէն... այսպէս զանազան լեզուներով խօսել գիտենալ, բայց գորանից ինչ օգուտ կըլինի եթէ նա միեւնոյն ժամանակ մի կօճակ կարել էլ չ'զիտենալ: Ես կրթուած դասակարգին պատկանող մարդ եմ, իշխան կանտիլինի հետ այնպէս եմ, ինչպէս աշխալիմ քեզ հետ, բայց ես խոհեմ ընաւորութիւն ունիմ: Ինձ ցանկալի կըլինէր ճարել ինձ համար մի հասարակ աղջիկ, գլխաւորը, որ նա ինձ յարգի և զգալ, որ ես նրան բաղդաւորեցրել եմ:

—Իհարկէ, դա յայտնի բան է:

—Օլքպէս, իսկ ալժմ խօսենք իրականի մասին... Հարուստ աղջիկ ես չեմ ուզում։ Ես ինձ, փողի վերալ ամուսնանալու ստորագիւնը, չեմ թոյլ

առալ: Ես ուզում եմ, որ ոչ թէ ես կնոջս հացը ուտեմ, այլ նա իմս և որ նա այդ գգայ: Բայց աղքատ աղջիկ էլ չեմ ուզում: Չնայելով, որ ես միջոց ունիմ, չնայելով, որ դրամի համար չեմ ամուսնանում, այլ սիրով, բայց և այնպէս, բոլորովին աղքատ աղջիկ ուզելը ինձ համար անկարելի է, որովհետև, ինքներդ գիտէք, այժմ ամեն ինչ թանկացել է, բացի դորանից՝ ախր երեխէք էլ կունենանք:

—Կարելի է բաժինքով աղջիկ ճարել, ասաց հարսնախօսը:

—Անուշ արէ՛ք խոնարհաբար խնդրում եմ: Մօտ հինգ րոպէի չափ սենեակում լռութիւն տիրեց: Հարսնախօսը հոգոց հանեց և մի խեթ հայեցք ձգելով կանդուկտորի վերայ հարցըց:

—Իսկ այնպէս... ձեզ ամուրիական ապրանք հարկաւոր չէ: Լաւ ապրանք կալ: Մէկը ֆրանսուհի է, իսկ միւսը լոլն, շատ լաւ բաներ են:

Կոնդուկտորը մտածեց և ասաց. —Ոչ, շնորհակալ եմ, Զեր կողմից այդպիսի համակրութիւն տեսնելով, ես իրաւունք եմ համարում ինձ այժմ հարցնել. որքան կըվերցնէք ձեզ՝ աղջիկ գտնելու համար պատճառած նեղութեան փոխարէն:

—Ես շատ չեմ ուզի: Մի քսանըհինգանոց կըտաք և ինչպէս ընդունուած է, մի գէլրացու ու շնորհակալ կը մնամ...: Իսկ բաժինքի համար առանձին հաշիւ կը լինի:

Սակայն ձեռները խաչեց կրծքին և սկսեց մտածել: Յետոյ նա հառաջեց և ասաց.

—Այդ թանկ է...  
—Իսկի էլ թանկ չի, նիկոլայ նիկոլաևիչ: Առաջ, երբ հարսանիքներ շատ էին լինում, աւելի արժան էինք վերցնում. իսկ այս ժամանակներս— ինչ աշխատանք ունենք: Եթէ մի ուտիս ամիս մի երկու քսանըհինգանոց աշխատենք, Աստծուն փառք կըտանք. այն էլ, այ հէրս, հարսանիքներից չի, որ աշխատում ենք:

Սակայն տարակուսանքով նայեց հարսնախօսի վերալ և ուսերը թափահարեց.

—Հմմ... երկու քսանըհինգանոց. միթէ դաքիչ է, հարցըց նա:

—Իհարկէ քիչ է: Վաղուալ ժամանակները պատահում էր, որ հարիւրից աւելի էինք վերցնում:

—Հմմ... ես իսկի չէի էլ սպասում, որ այդպիսի արհաստով այդքան փող կարելի լինի աշխատել: Յիսուն րուբլի՝ ամեն տղամարդ էլ էդքան չի ստանայ: Անուշ արէք, խոնարհաբար խնդրում եմ...

Հարսնախօսը կուլ տուեց և իսկի չխոժուուեց էլ. Սակայն լուռ դիտեց նորան ոտից մինչև գլուխ և ասաց.

—Յիսուն րուբլի... դա կընշանակի տարեկան վեցհարիւր րուբլի... խոնարհաբար խնդրում եմ անուշ արէք—այդպիսի դիվիդենտով, զիտէք լիւրով:

Գրիգորենա, ձեզ համար ամուսնանալ էլ գժուար չէ:  
—Ե՞ս ամուսնանամ, ծիծաղեց հարսնախօսը.  
Ես ախար պառաւ եմ:  
—Երբէք! Ձեր կազմուածքը այնպէս է... դէմքն  
էլ կլօրիկ, սպիտակ և առհասարակ...:  
Հարսնախօսը կարմրատակեց: Ստիչկինը նմա-  
նապէս կարմրեց և նստեց նորա կողքին,  
—Դուք դեռ շատ գուր գալ կարող եք, ասաց  
նա.—Եթէ գուք մի այնպիսի ամուսին գտնէք, որը  
այնպէս դրական, հասակաւոր և ինալող մարդ լի-  
նի, այն ժամանակ նրա ռաճիկը ձեր աշխատանքի  
հետ միասին.. գուք դեռ կարող եք շատ գուր  
գալ և սիրով ապրել այդպիսի մարդու հետ:  
—Աստուած գիտի թէ ինչեր եք ասում, նի-  
կոլայ նիկօլաւեիչ...:  
—Ի՞նչ է որ. Ես ոչինչ...  
Լութիւնը տիրեց: Ստիչկինը սկսեց բարձրա-  
ձայն խնչել: Իսկ հարսնախօսը ամաչելով, կարմ-  
րատակած նորա վերայ նայելով ասաց.  
—Իսկ գուք ինչքան եք ստանում, նիկօլայ  
նիկօլաւեիչ:  
—Ե՞ս, եօթանասուն և հինգ րուբլի՝ բացի  
նազրադներից... բացի դրանից մենք կարտօֆիլի  
մոմերից և նապաստակներից արդիւնք ունինք:  
—Որսորդութեամբ եք պարապում:  
—Ոչ, նապաստակ մենք անուանում ենք ան-  
տոմսակ ճանապարհորդներին:  
Անցաւ դարձեալ մի բոպէ լոռութեան մէջ:

Ստիչկինը բարձրացաւ տեղից և լուզուած սկսեց  
սենեակում անց ու դարձ անել:  
—Ես երիտասարդ կին չեմ ուզում—ասաց նա  
ես հասակաւոր մարդ եմ և ինձ հարկաւոր է  
այնպիսի մէկը, որը... ալ, ձեզ նման մէկը... հա-  
սակաւոր... լուրջ և ձեզ նման կազմուածք ունեցող...  
—Աստուած գիտի թէ ինչեր կասէք դուք...  
քռքռաց հարսնախօսը թաշկինակով իւր մուք  
կարմրագոյն դէմքը ծածկելով:  
—Ել ինչ երկար մտածենք. գուք ինձ համար  
յարմար եք և գուր եք գալիս ինձ ձեր յատկու-  
թիւններով: Ես դրական մարդ եմ, խմող չեմ և  
եթէ ձեզ գուր եմ գալիս... Ել ինչ երկար մտա-  
ծենք: Թոյլ տուէք ձեզ առաջարկութիւն անել:  
Հարսնախօսը արտասուեց, ծիծաղեց և ի նշան  
իւր համաձայնութեան՝ իւր բաժակը չընկացըց  
Ստիչկինի բաժակի հետ:  
—Դէհ, գոչեց բաղգաւոր օբեր կօնդուկառը—  
այժմ թոյլ տուէք ինձ բացատրել, թէ ես ձեր մէջ  
ինչ վարք ու բարք եմ ուզում տեսնել...: Ես խըս-  
տապահանջ, դրական և լուրջ մարդ եմ, ամեն բանի  
մասին ազնիւ գաղափար ունիմ և ցանկանում եմ,  
որ իմ կինս էլ լինի խոհեմ և լուրջ և հասկանալ,  
որ ես նրա համար առաջին մարդն եմ և նրա բա-  
րերարն եմ:  
Նա նստեց և խոր հառաչելով սկսեց բացատ-  
րել իւր հարսին իւր, ընտանեկան կեանքի և կոչ  
պարտաւորութեանց մասին ունեցած հայեացքները:

## ԵՇ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒԻՆ

— Նաբաշ, ալլես խմելու չեմ՝ ոչ մի պայմանով, խելքի գտու ժամանակ է արդէն։ Հարկաւոր է գործել, աշխատել...։ Միրում ես ժամանակին ոռճիկդ ստանալ, ուրեմն աշխատիր ազնւութեամբ, եռանդով, խղճմտանքով, քունդ և հանգստութիւնդ անգամ չ'խնայելով։

Օբեր կօնդուկտոր Պադտեագինը սրա նման մի քանի խրատներ էլ կարգալով իւր գլխին, սկսում է աշխատելու անլագ ձգառումն զգալ։ Արդէն ժամի 2-ն է, բայց չնայելով դորան, նա արթնացնում է բոլոր կօնդուկտորներին և նոցա հետ միասին սկսում է շրջել վագօնները, տօմսակները ստուգելու համար։

— Զեռռռ... տոմսակը, կանչում է նա ունեւիքը ուրախ ուրախ չխչխացնելով։

Քնաթաթախ գլուխները, վագօնների կիսախաւարով պատած, վեր են թռչում տեղներիցը, զլուխները թափահարում են և տալիս են իրենց տոմսակները։

— Զեռռռ... տոմսակը. դառնում է Պադտեագինը 2-րդ կլասսի մի լղար և ջղոտ ճանապարհորդի, որը մուշտակի և վերմակի մէջ փաթաթուած և բարձերով շրջապատուած քնած էր։

— Զեռռռ... տոմսակը։

Ջղոտ մ սրգը պատասխան չէ տալիս։ Նա խորասուզուած է քնի մէջ։ Օբեր կօնդուկտորը նրա ուսին թեթև կերպով հրելով անհամբերութեամբ կրկնում է։

— Զեռռռ... տոմսակը։

Ճանապարհորդը ցնցում է, բանում է աչքերը և սարսափած նայում է Պադտեագինի վերայ։

— Ի՞նչ . ով... ում։

— Զեզ մարդավարի ասում են ձեռռ... տոմսակը. նեղութիւն կրեցէք։

— Աստուած իմ, տնքում է ջղոտ մարդը ողբալի դէմք ընդունելով։ Տէ՛ր Աստուած, ոսկրացաւ ունեմ... երեք զիշեր է չեմ քնել, մօրդի ընդունեցի, որ քնեմ, իսկ դուք տոմսակ։ Դա ախր անխղճութիւն, անաստուածութիւն է։ Եթէ զիտենալիք թէ որքան դժուար է ինձ քնելը, այդպիսի դատարկ լանի համար ինձ չէիք անհանգստացնի։ Անխղճութիւն է դա, եւ ինչի համար իմ տոմսակը ձեզ հարկաւոր եղաւ։ Մինչև անգամ յիմարութիւն է դա։

Պադտեագինը մտածում է նեղանալ, թէ ոչ և վճռում է նեղանալ։

— Դուք ալստեղ մի գոռաք, սա զինետուն չէ, ասում է նու։

— Գինետնում կտրելի է աւելի մարդավարի անձանց հանդիպել, ասում է նա հազարով։ Բնչպէս քնեմ ես ալժմ երկրորդ անգամ։ Զարմանալիք բան, ամբողջ Եւրոպան անցալ, ալնտեղ ինձանից

ոչ ոք տոմսակ չ'պահանջեց, իսկ այստեղ՝ Ուռ-  
սաստանում, կարծես սատանան է սրանց թե՛ի  
տակը հրում, գալիս ու գալիս են:

—Եթէ արտասահմանը արդպէս հաւանում  
էք, գնացէք ալնտեղ, ձեզ խնդրող չկայ:

—Յիմարութիւն է դա, պարմն, ալո՛, բաւա-  
կան չի, որ ճանապարհորդներին ածխահոտով, տօ-  
թով և հակառակ քամիներով սպանում էք, մի  
ինչ որ ձևականութիւն էլ էք մտցրել: Սրան տոմ-  
սակ ստուգել հարկաւորուեց: Ասացէք խնդրեմ,  
ինչ գործունեոյ են դարձել: Աստուած տար, որ  
դա ստուգելու համար լինէր. չէ՞ որ ճանապար-  
հորդների կէսը առանց տոմսակի են գնում:

—Լսեցէք, պարոն, կարմրատակում է Պադ-  
տեադինը, եթէ դուք աղմկելը և հասարակութեանը  
անհանգստացնելը չէք դադարեցնի, ես ստիպուած  
կըլինեմ, առաջին իսկ կալարանում, ձեզ իջեցնել և  
այս դիպուածի մասին արձանագրութիւն կազմել:

—Այս անտանելի է, դժգոհում է հասա-  
րակութիւնը, հիւանդ մարդուն անհանգստաց-  
նում է: Լսեցէք, խղճմանք ունեցէք դուք վեր-  
ջապէս:

—Ախը չէ որ իրենք են աղմկում, ասում է  
Պադտեագինը վախեցած ձայնով, լաւ, ես տոմսակ չեմ  
վերցնի.. Ինչպէս կամենաք, բայց չէ որ դուք ինք-  
ներդ գիտէք, որ իմ պաշտօնս է ալդ պահանջում...  
Եթէ պարտականութիւնս չլինէր, այն ժամանակ ի  
հարկէ. . կարող էք մինչև անդամ կալարանապետից

տեղեկանալ... Ում կամենաք՝ հարցը է՞ք:

Պադտեագինը ուսերը թափահարելով հեռա-  
նում է հիւանդից: Ակզբում նա իրեն փոքր ինչ վի-  
րաւորուած է զգում, բայց յետոյ, մի երկու, երեք  
վագոն անցնելուց յետոյ նա իւր օքեր կօնդուկտո-  
րական կրծքում սկսում է մի ինչ որ անհանգս-  
տութիւն, խղճի խալթոցի նման մի զգացումն  
զգալ:

—Իսկապէս հիւանդին հարկաւոր չեր արթ-  
նացնել, մտածում է նա, Բայց ես մեղաւոր  
չեմ... Նրանք կարծում են, թէ ես ալդ անում  
եմ հէնց ալնպէս, քէֆիս համար, անգործութիւ-  
նից, իսկ այն չ'գիտեն, որ ալդ բանը իմ պաշ-  
տօնս է պահանջում: Եթէ նրանք չեն հաւա-  
տում, ես նրանց կալարանապետի բերանով կ'ապա-  
ցուցանեմ:

Հասան կալարան: Գնացքը պիտի հինգ ըոպէ  
կանգ տանի:

Երկրորդ զանգից յետոյ 2-րդ կլասի վերոյիշեալ  
վագոնն է մտնում Պադտեագինը: Նրա յետեւից  
գալիս է կալարանապետը, կարմիր գլխարկը գլխին:

—Ահա այս պարոնը, սկսում է Պադտեագինը  
—ասում է, որ ես տոմսակ պահանջելու լիա-  
կատար իրաւունք չունեմ և. . և նեղանում է,  
խնդրում եմ ձեզ, պ. կալարանապետ, նրան բա-  
ցատրէք՝ արդեօք իմ պարտականութիւնս է ալդ  
տոմսակ պահանջելը, թէ ոչ: Պարոն, դառնում է  
Պադտեագինը ջղոտ մարդուն,—պարոն, կարող էք

ահա կայարանապետից հարցնել, եթէ ինձ չէք Հաւատում:

Հիւանդը վեր է թռչում տեղից՝ կարծես օձի խալթոցից, բանում է աչքերը և լացակրկնած գէմքով յենւում բազմոցի յենարանին,

— Աստուած իմ, երկրորդ պարաշոկն ընդունեցի և հազիւ թէ մի քիչ աչքս խփել էի, որ սա նորից... նորից Աղաչում եմ ձեզ, խղճտանք ունեցէք:

— Դուք կարող եք խօսել ահա կայարանապետի հետ... Ունեմ լիակատար իրաւունք տոմսակ պահանջելու թէ ոչ.

— Այս անտանելի է, առէք ձեր տոմսակը, առէք. ես դարձեալ հինգ տոմսակ կը գնեմ, միայն թողէք ինձ հանգիստ մեռնել: Միթէ դուք երբէք հիւանդ չէք եղել, անզգայ մարդիք:

— Դա ուղղակի ծաղրել կընշանակի մարդուն, տրտնջում է մի ինչ որ պարոն զինորականի հագուստով. այլ կերպ ես չեմ կարող հասկանալ այդ զահլա տանելը

— Թողէք... ասում է կայարանապետը, Պագտեագինի թեկից քաշելով և յօնքերը կիտելով.

Պագտեագինը ուսերը թափահարելով, տարակուսած կայարանապետի յետեկից դուրս է գալիս.

«Դէ արի սրանց բաւարարութիւն տուր, մտածում է նա, ես կայարանապետին կանչեցի, որպէս

զի նա հասկանայ և հանգստանայ, իսկ նա հալհում է...»

Հասան հետեւեալ կայարանը: Գնացքը տաս ըուպէ էր կանգնում. նախ քան երկրորդ զանգը, երբ Պագտեագինը բուժեափիմօտ կանգնած սէլտերի ջուր էր խմում, նրան մօտեցան երկու պարոններ, մէկը ինժիների հագուստով, իսկ միւսը զինուորականի վերաբկուով:

— Լսեցէք, օքեր կօնգուկտոր, գառնում է ինժիները գէպի Պագտեագինը. — Ձեր վարմունքը հիւանդ ճանապարհորդի վերաբերմամբ յուզեց բուլոր ներկայ եղողներին: Ես ինժիներ Պուզեցին եմ, իսկ այս պարոնը զնդապետ է: Եթէ գուք այն ճանապարհորդից ներումն չ'խնդրէք, մենք կըդանդասուենք մեր ընդհանուր ծանօթ՝ հաղորդակցութեան վերատեսչին:

— Պարոններ, ախր ես... ախր... գուք... թոթովեց Պագտեագինը:

— Մեզ բացատրութիւն տալ հարկաւոր չէ, մենք նախազգուշացնում ենք եթէ ներումն չը խնդրէք, մենք այն ճանապարհորդին մեր հավանաւորութեան տակ կառնենք:

— Շատ լաւ... ես... ես... համեցէք, կ'խնդրեմ ներումն... համեցէք:

Կէս ժամից յետով Պագտեագինը, ներումն խնդրելու համար մի ճառ պատրաստած, որը կարող լինէր հիւանդին բաւարարութիւն տալ և իւր արժանաւորութիւնը չ'ձգէր, մտնում է այն վագոնը:

4025

32

—Պարսն, դառնում է նա դէպի հիւանդը—  
լսեցէք պարոն։ Հիւանդը ցնցում է, վեր է թռ չում։  
—ի՞նչ է։

—Ես, այսինքն... էնսլես. գուք մի նեղանաք։

—Օ՞ի ջուր... խեղդւում է հիւանդը սիրտը  
բռնելով—երբորդ պարաշոկ մօրֆին ընդունեցի,  
նիրհեցի և դարձեալ... Տէր Աստուած, Երբ կը  
վերջանայ այս տանջանքը։

—Ես, այսինքն... ներեցէք։

—Լսեցէք... ինձ հետեւեալ կայարանում իջեց-  
րէք. — այլևս տանել անկարող եմ... Ես ես մեռ-  
նում եմ։

—Ուր ստորութիւն, կեղտոտութիւն է, — յուղ-  
ում է հասարակութիւնը. կորէ՛ք դուրս այստեղից։  
Դուք ալդուի ծաղրանքի համար կը պատժուէք,  
Գներս։

Պադտեազինը ձեռքերը թափահարելով և հո-  
գոց հանելով վագոնից դուրս է գալիս։ Գնում է  
ծառայողներին յատկացրած վագոնը, տանջուած  
նստում է սեղանի մօտ և տրտնջում... .

Էհ, հասարակութիւն, հասարակութիւն։ Արի  
բաւարարութիւն տուր դըան։ Դէ՞հ եկէ՛ք, ծառալե-  
ցէ՛ք, աշխատեցէ՛ք։ Ակամալից ամեն բանի վրայ կը  
թքես և խմելուն անձնատուր կըլինես... բան չես  
շինում՝ բարկանում են, կսկսես գործել՝ նմանապէս...  
իմե՞լ։ Պադտեազինը խմում է միանդամից կէս շիշ, և  
այլևս աշխատելու. և ազնւութեան մտոին չի մը-  
տածում։



2013

th. 8 1

hutch